



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Exp. Flap 100

1000  
1000  
1000  
1000  
1000

175

1277



343

19 AUG 2011

24 JAN 2006

ԷՏ. ԲԵՐՆՇՏԱՅՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԸ

ԵՒ

ԵՒՐՈՊԱՆ

Հրատ.

«Բոսնի» խմբագրութեան.

ԺԸՆԵՎ.

1906

Հ-9 (97.925)  
Գ Բ-56



ԷՏ. ԲԵՐՆՇՏԱՅՆ

9 (47.925)

F-56

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՆՁԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԵՒՐՈՊԱՆ

Դասախօսութիւն կարդացած Ռեդինոմ,  
1902 թի յունիսի 26-ին:

Թարգմանեց Ս. Մ.



Հրատ.  
„Ռոսսիկի“ խմբագրութեան.

ԺԸՆԵՎ,  
1906



05 MAR 2013

65/6



( 944-61 )

4

29731-81

I

Այն ժողովուրդը, որուն պատմութիւնը կամ մանաւանդ տառապանքները և ճակատագիրը այսօր մեզ պիտի դբաղեցնեն, մենե շատ հեռու կը բնակի, միջագային մեծ ուղիներէն դուրս և համեմատաբար, մինչև նորերս, շատեր չէին գիտեր անոր գոյութիւնը: Իսկապէս շատ քիչերուն յայտնի էր հայ ժողովուրդի կեանքը և այն պայմանները, որոնց մէջ կը շարունակէր իր գոյութիւնը պահպանել: Մէկ քանի աշխարհագիրներ և պատմագիրներ միայն կը շահագրգռուէին անոնց պատմութիւնով, ինչպէս նաև անոնք, որ առհասարակ ընդհանուր քաղաքակրթութիւնով կը զբաղին:

Թերևս առարկի թէ մեր մէջ ևս կան մեզ զբաղեցնող բազմաաեսակ տառապանքներ, կեղերումներ. ուրեմն ինչ հարկ կայ շատ հեռուները, Պաքը-Ասիոյ կորսուած գաւառներու մէջ երթալ փնտռել և հետաքրքրել, թէ ինչ կանցնի կը դառնայ այնտեղ: Ճիշտ է. բայց այն հարածանքները և անագորոյն ու գաղանային բանութիւնները, որոնց ամենօրեայ զոհերն են եղած և են հայերը, այնքան տարապայման բնաւորութիւն ունին, որուն համար բոլոր քաղաքակրթագրերու միահամուռ բողոքը հարկաւոր է: Պարբերաբար, այդ սարսափները մինչև իսկ յետագէմ կառավարութիւններուն խիղճը յու-

1- 10105



զեցին և ստիպեցին զանոնք ուշադրութիւն դարձնել այս ժողովրդի վիճակին վրայ: Ասկէ գատ, հայերուն ճակատագիրը և գոյութիւնը կը հետաքրքրեն մեզ ուրիշ շատ մը նկատումներով: Հայ ժողովուրդը կեդրոնը կը կազմէ այն խոշոր հարցին որ կը կուէի Արևելեան հարց, և որ ծանր կերպով մէկ օր նորէն պիտի դարձնէ քաղաքակիրթ ժողովուրդները, պիտի խռովէ արևմտեան ազգերու խաղաղութիւնը, գժտութիւն պիտի ձգէ անոնց մէջ և այսպէս պիտի ուշացնէ քաղաքակիրթութեան առաջխաղացութիւնը:

Մարդասիրական օ և է նկատումէ դուրս, հայ ժողովրդի ճակատագիրը պէտք է գրազեցնէ մեզ ուրիշ տեսակէտով: Եւրոպան և Եւրոպայի հետ Գերմանական ժողովուրդը հայ ժողովրդի հանդէպ ուղղակի պարտականութիւններ ունին կատարելք: Մեր Գերմանական կառավարութիւնը, Եւրոպայի միւս ազգերուն հետ համաձայն, 1878 Յուլիսին, Պերլինի Վեհաժողովին մէջ, վերջի ուսութիւնը պատերազմէն յետոյ, որոշ պարտաւորութիւններ յանձն առաւ դէպի հայ ժողովուրդը. և այսօր ժողովուրդները պատասխանատու են իրենց կառավարութեան գործերուն: Երբ խնդիրը, գլխաւորաբար, մարդասիրական և արդարութեան պահանջներու մասին է, և կառավարութիւնները իրենց ստորագրած գրաւոր խոստումները չեն կատարեր, ժողովուրդներուն կիշնայ ազգու կերպով կոչ ընել այդ կառավարութիւններուն որ պարտաճանաչ ըլլան: Հայերը հալածական, հարստահար և ջարդուկոտ, իրենց յոյսը դրած են Եւրոպայէն եկած օգնութեան վրայ. անոնք անհավերք և անձկագին կը նային մեծ տէրութիւններու և մեծ ազգերու բռնելիք ընթացքին՝ որոնք Պերլինի գաշնագրով պարտաւոր են օգնել անոնց և պաշտպանել զանոնք բնաջինջ ընել սպառնացող բռնութիւններուն դէմ:

1877-78 ի Ռուս-Թիւրք պատերազմը ձեռք բռնելու յայտնի է: Այդ պատերազմը վերջացաւ Թիւրքիոյ պարտութիւնով, որ հզոր դիմադրութիւնէ մը յետոյ, յաղթեցաւ մեծագոր Ռուսաստանէն՝ դաշնակից Ռուսմանիոյ և ուրիշ Սլաւ ժողովուրդներու: 1878 մարտ ամսին, Ռուսիա Սան Սթեֆանոյի դաշնագիրը կնքել կուտար Թիւրքիոյ: Այդ դաշնագրով Ռուսիան հայերու տէր և պաշտպան կը կարգէր, այսինքն, և թէ կարելի է այսպէս ըսել, Թիւրքիա անոր իրաւունք կուտար՝ իրեն հպարտակ քրիստոնէայ ժողովուրդներու շահերուն վրայ հակելու: Շատ արդարացի կասկածներ կարելի է յայտնել, Ռուսաստանի պաշտպանի դերի մասին, մասնաւորապէս, իրաւունք ունի՞ ուրիշ ազգերու մեղադրանք ուղղել, քանի որ ինքը իր հպարտակ ազգերը կը հարստահարէ:

Այսօր մասնաւոր, կարելի է, այդ հարցումը ընել, երբ կը տեսնենք թէ Ռուսաստանը ինչէ՞ր կրնէ ֆինլանդացի մէջ և ինչպէս կը վարւի միւս ժողովուրդներուն վերաբերմամբ, որոնց հետ անբռնաբարելի դաշնագրութիւններ ունի կնքած, ինչպէս օտնակոխ կընէ այդ դաշնագրութիւնները, ինչպէս կը ձգմէ այդ ազգութիւնները և ինչ բռնութիւնով կուզէ զանոնք ուսացնել, գործ գնելով միեւնոյն միջոցները՝ որով Թիւրքիան կը ջանայ ջնջել Հայաստանի մէջ եղող ազգութիւնները: Սակայն այս խնդիրը առայժմ մեզ չհետաքրքրեր, որովհետեւ, այժմ, հայկական հարցը ուրիշ կերպարանք առած է: Հայ ժողովրդին, և Թիւրքիոյ քրիստոնէայ ժողովուրդներուն համար գոնէ, Ռուսաստանը՝ իսկապէս, քանի քանի անգամ պաշտպան հանդիսացած է:

Թէ ինչ բանէ թելագրուած կը պաշտպանէ, միևնոյնն է այդ ժողովուրդներուն համար: Երբ ժողովուրդները կը տառապին, չեն հարցնիր թէ ինչու իրենց օգնութեան կը հասնին, անոնք ազատ ըլլալին կը նային:



1878 ին, Եւրոպան Տիւրքիայէլի, Անգլիոյ Պետական մար-  
դուն առաջարկին վրայ, Սան Սթեֆանոյի գաշնագրին  
հակառակեցաւ. Պերլինի գաշնագրով Եւրոպան Ռուսիոյ  
ձեռքէն առաւ հայերուն վրայ հսկելու պաշտօնը և իր  
վրայ առաւ այդ պարտականութիւնը, որով Եւրոպան  
կրկին պարտականութիւն կը ստանձնէր: Պերլինի գաշ-  
նագրութիւնը՝ զրկելով հայերը այնպիսի պաշտպանէ մը,  
որուն վրայ, գոնէ քիչ շատ յոյս կրնային դնել, անոր  
տեղը դրաւ եւրոպական համաձայնութիւնը, որ շատ  
անպիտան պաշտպան մ'եղաւ հայերուն համար. շատ ա-  
ւելի անպիտան քան Ռուսաստանը, որ կարգուած էր Սան  
Սթեֆանոյի գաշնագրով: Ընդունինք ասիկա, թէև, այ-  
լապէս, հակառակ ըլլանք ուս կառավարութեան:

Արդ, գանձեցան մարդիկ որ ամբողջովին ուրացան  
թիւրքիոյ մէջ քրիստոնեաներու հարստահարութիւնները  
թիւրք ժողովուրդին վերադրելով մասնաւորապէս ընտիր  
բարեմասնութիւններ: Անոնց կարծիքով հարձանքները  
թեթեւ բաներ են. իսկ խռովութիւնները ուս գործա-  
կաշնորու գործն է, որուն համար թիւրք կառավարու-  
թիւնը ստիպուած է խիստ ըլլալ: Սխալ հետեւութիւն է  
սակայն: Անշուշտ Ռուսաստանը թիւրքիոյ մէջ գոր-  
ծակաշնորու կը պահէ. վաղուց է արդէն որ ան Պոլիսը  
զրաւելու աչք ունի, որպէս զի Սև և Միջերկրական ծո-  
վերուն տիրանայ. այդ մասին կասկած չկայ: Բայց միայն  
Ռուսաստանին նայելով թիւրքիոյ արարքներէն չհեռա-  
ցնենք մեր ուշադրութիւնը: Այս միթիւնկին կազմակեր-  
պողները և ես ինքս օ և է նախապաշարուած չունինք դէ-  
պի թիւրք ժողովուրդը, իրբև ազգ. ընդհակառակը մենք  
միևնոյն զգացումները կը տածենք հայ և թիւրք ժողո-  
վուրդներուն համար: Աստի, երբ մենք կը խօսինք թիւր-  
քիոյ մասին, մեր խօսքը թիւրք ժողովրդին համար չէ,  
հապա թիւրք պաշտօնեաներուն, թիւրք կառավարու-  
թեան և թիւրքիոյ ամբողջ կառավարչական սիստէմի  
յասին է:

Եթէ մարդ մօտէն դիտէ այդ սիստէմը և հետեւի  
անոր ընթացքին, մասնաւորապէս այս վերջի դարուն,  
այն համոզման կու գայ թէ այդ սիստէմը, իսպառ փտած  
ապականած, անընդունակ և աղէտաբեր է թիւրքիոյ  
ընդհանուր ժողովուրդներուն համար: Թիւրքիոյ ըէժիմը  
թոյլ չտար որ ժողովուրդները շարունակեն զարգանալ.  
Նահանգներ կան, որոնք կարող էին դրախտ դառնալ, —  
ինչպէս հայկական քանի մը նահանգները —, ետ մնա-  
ցեր են քաղաքակրթութեան մէջ, կամ բոլորովին ամա-  
յաւեր եղած են: Չենք ուրանար որ թիւրք ժողովուրդը  
կարող է մեծ յատկութիւններ ունենալ և շատ անգամ-  
ներ ցոյց տաւ ըլլալ: Բայց իրերը մակերեսէն չդա-  
տենք: Ի՞նչ են սակայն թիւրք ժողովուրդի մը այդ մեծ  
յատկութիւնները, եթէ ոչ աշխարհակալ ժողովուրդի մը  
յատկութիւնները, որոշ աղնականութիւն մը և ինքնա-  
հպարտութեան մեծ զգացում մը. բայց եթէ աւելի մօ-  
տէն դիտենք և քննենք թէ ինչ պայմաններու մէջ այդ  
յատկութիւնները զարգացած են, կը տեսնենք որ միշտ  
ի վնաս հպատակ ազգերուն եղած է, որոնց վրայ Օսմա-  
նեան բռնակալութիւնը, երկաթէ լուծի մը պէս ծանրա-  
ցաւ և դեռ կը ծանրանայ:

Շատ խօսուած է օտար կրօններու նկատմամբ թիւր-  
քիոյ ներողամտութեան մասին, և ասոր ապացոյց կը  
բերեն այս քրիստոնեայ ժողովուրդները, որոնք դարերէ  
իվեր, թրքական տերապետութեան տակ, դեռ գոյու-  
թիւննին և կրօննին պահած են: Ըստինքեան ճիշտ է աս:  
Օսմանեան լուծին տակ Պալքանեան, ինչպէս նաև Փոքր  
Ասիոյ շատ մը ժողովուրդները պահպանած են իրենց  
ազգութիւնը:

Պատճառը կայ: Մէկ կողմէն թիւրքերը, իբր յաղ-  
թող ժողովուրդ, բայց ոչ քաղաքակրթ, անընդունակ  
էին, բառին բուն նշանակութիւնով, իւրացնելու յաղ-  
թուած ժողովուրդները. բացի այն, Սուլթանի կառավար-



բուժիչներ ընդհանրապէս կը կենայ սա սկզբունքին վրայ թէ պէտք է օտարազգի ժողովուրդները աւելի շահագործել քան բուն իսկ թիւրքերը:

Թիւրք բէժիմը, մինչև օրս, եղած է, տեսակ մը գինւորական կառավարութիւն: Թիւրք ցեղը Թիւրքիոյ մէջ փոքրամասնութիւն կը կազմէ դեռ և կապրի պետական միջոցներով: Այդ բեռը բոլորովին կը ծանրանայ միւս ժողովուրդներուն վրայ՝ իբր ոչ մահմետականներ. որովհետև մինչև 19րդ դարու կեսը, սկզբունքով քրիստոնէականները, Թիւրքիոյ մէջ միեւնոյն իրաւունքները չունէին ինչպէս թիւրքերը: Քրիստոնէական իբր պետութեան անդամ, գրեթէ ոչինչ էր. չէր կրնար գէնք կրել և աւելի մեծ տուրք պէտք է վճարէր քան թիւրքը: Թիւրք կառավարութիւնը գրամական սաստիկ տագնապէն այդ ժողովուրդներուն վրայ ծանր տուրքեր կը դնէր. այդ տագնապը աւելի կը սաստկանար 18 դարու վերջին, երբ իր գորութիւնը կսկսէր տկարանայլ, ինչպէս նաև կը մեծնար գիւմազութիւնը իր կառավարական սխառտման և եւրոպայի մնացեալ քաղաքակրթական զարգացումին միջև, ուր կը սկսէին ծնիլ աւելի բարձր անտեսական գրութիւններ, որոնց, այն ատեն, անընդունակ էին թիւրքերը ընտելանալու: Այսպիսի պայմաններու մէջ, թիւրքիոյ լուծը երթալով անտանելի կը դառնար իր հպատակ ժողովուրդներուն համար:

Պէտք է նկատի առնել նաև երկրորդ իրողութիւն մը: Թիւրք ժողովրդին կրօնը մահմետականութիւնն է՝ որու մասին, Եւրոպայի մէջ մեծ գաղափար կազմած են: Քրիստոնէութեան պատմութեան մէջ յայտնի կուի—վէճերէն կեդրակացնեն որ մահմետականութիւնը աւելի լաւ պատուիրաններ կը պարունակէ և թէ ամէն տեսակէտով բարձր է քրիստոնէութեանէն: Ինչ որ սխալ է: Չենք ուզեր այստեղ կրօններու փիլիսոփայութեան վրայ ծանրանալ. բայց պէտք է նկատել հետևեալը:

Երբ կրաւի թէ մահմետական կրօնը քաղաքակրթութեան նպաստաւոր է, միջին դարու վերջը արաբական տիրապետութեան օրով իսլամական քաղաքակրթութեան շրջանը կը հասկցուի: Այդ ժամանակին, անուրանալիօրէն, մահմետական արարները մեծ բաներ արտադրեցին. բայց աշխարհի պատմութեան մէջ, շատ կարճատև շրջան մը եղաւ ադ շրջանը: Մահմետականութիւնը, այդ ատեն, դեռ իր առաջին երիտասարդական շրջանին մէջ, Պաղովաններու Եգիպտական քաղաքակրթութեան ուղղակի ժառանգորդն էր: Մահմետականութիւնը, անշուշտ, ընտիր պատուիրաններ ունի. եթէ Ղուրանը կարգաբ, շատ ազոր կտորներ կը գտնէք հոն, որոնք, բաւական նմանութիւն ունին քրիստոնէական կրօնի ժողովածուններու բովանդակութիւններուն մէկ քանիին հետ: Կոյն իսկ կը կարծեմ թէ, ներկայ ո և է քաղաքակրթութեան ժողովուրդ, ընդունելով մահմետականութիւնը, կրնայ միեւնոյն յառաջդիմութիւնը ընել ինչպէս քրիստոնէութեան մէջ: Արօնները չունին կարծած ամենակարող ազդեցութիւնը, թէև պարագային համեմատ, կրնան նպաստել կամ ուշացնել քաղաքակրթութեան առաջընթացութիւնը:

Մինչև ժամանակ մը մահմետականութիւնը քաղաքակրթութեան ո և է արգելք չէր, բայց ետքն արգելք եղաւ, մասնաւորապէս թիւրքիոյ երկիրներուն մէջ: Մահմետականութիւնը, Արաբիոյ մէջ ծնած, կրօնն է վրանաբնակ ժողովրդի մը, որ գլխաւորապէս կը բաղի անասնաբուծութիւնով և որու մէջ վաճառականութիւնը շատ անկանոն է, ինչպէս է դեռ մինչև օրս Արևելքի և ընդհանրապէս Աֆրիկէի մէջ: Մահմետականութիւնը այդ ժողովրդի սպրեւիկերային շատ լաւ կը յարմարի:

Հետևեալ իրողութիւնը ցոյց կուտայ թէ որքան կրօնական սոցիման քիչ գերակշիռ ազդեցութիւն ունի քաղաքակրթութեան վրայ: Մահմետականութեան մէկ



գլխաւոր սօկման, հաւատոյ գլխաւոր հանգանակներէն մէկը, նախասահմանութիւնն է. այսինքն թէ ամէնուն ճակատագիրը առաջուց որոշուած է և ոչ որ իր ճակատագրէն կրնայ պրծնիլ: Եթէ ես պէտք է մեռնիմ կամ ապրիմ և ինչ կերպով, ըստ սոյն վարդապետութեան՝ նախօրօք վճուած բան է և ազատելիք չունիմ: Անխուսափելի ճակատագրի մը, զըսմէթին, այս հաւատումը, մահամտական օրէնքի հիմն է: Կմանօրինակ սօկմա մը կը գտնենք Կալվինականութեան մէջ, որ նոյնպէս կը հաւատայ թէ, մարդ ինչ որ ընէ կամ չընէ, նախապէս որոշուած է: Օրինակ, եթէ մէկը կալվինականութիւնը կրնդունի, իրօք Աստուծոյ շնորհքովն է և ոչ թէ իր անձնական արժանիքին գործը: Սակայն պէտք է նկատել որ Եւրոպայի մէջ կալվինականութիւնը ընդունողները եղան Ֆրանսացի շիւկնօնները, Զւիցերիացի նորադանդները, Հոլանտացիք, Սկոտացիք և առհասարակ Անգլիացիք: Ամէնքն ալ ուժեղ և այդ ատեն ամենաքաղաքակիրթ ազգերը և ժողովուրդներն են, որոնք կորովի դաւաջուծ մը ունեցան և դարեր շարունակ հզօր ներկայացուցիչը եղան նորագոյն շարժումին: Ընդհակառակը, Արևելքի մէջ, միևնոյն գաղափարը, ժողովուրդներէն մը յատուկապէս ջատագ ճակատագրականութեան մը յանդէպ: Բայց եթէ, զըսմէթի գաղափարը, հանդերձեալ աշխարհի մը նիւթապաշտ ըմբռնումով, ինչ ինչ պարագաներու մէջ գինւորին արհամարել տւած է մահը պատերազմի դաշտին վրայ, միւս կողմէ կարելի է ըսել թէ թիւրք ժողովրդի միտքը խորապէս թմրեցուցած է: Կալվինականութիւնը ուղղակի յեղափոխական ճամբայ բռնեց: Աերանորոգումը գլխաւորաբար կալվինականները ձեռք բերին. անոնք էին որ ազագային մեծ կոիւններ մղեցին քաղաքական ազատութեան համար: Եւրոպայի մէջ տիրող պայմանները բոլորովին տարբեր են թիւրքի պայմաններէն, և գլխաւորաբար տարբեր անտեսական պայման-

ներ կը տիրեն. ահա, ասոր համար է, որ միևնոյն գաղափարը հակառակ ուղղութիւնով գործեց:

Մեր օրերը, թիւրքի մէջ, մահամտականութիւնը իր սկզբունքներով և սօկմաներով, քաղաքակրթութեան կարեւոր սատար մը չէ: Սակայն, թիւրք ժողովրդին համար միայն շահեկանութիւն ունեցող բաներ են ասոնք: Մենք միսիօնարներու ժողով չենք: Թիւրք ժողովրդին գիտնալու բանն է վարդապետել և լուսաւորել իր սոցիալի հարցերու մասին:

Այժմ մէկ ուրիշ բան: Թիւրքի մէջ, ըստ մահամտական սկզբունքի, պէտք չէ հայածել կեանքները, բայց պէտք չէ նաև որ անոնք միևնոյն իրաւունքները վայելեն ինչպէս իսլամները: Թիւրքի իր կազմութիւնով միահեծան է և կառավարութիւնը նոյնքան բացարձակ է որքան Ռուսաստանի մէջ. ինքնակալութիւն մընէ որու գլուխը միանգամայն կայսր և խալիֆա է: Սուլթանը միաժամանակ երկրին քաղաքական և կրօնական պետն է, իսկ տեսականապէս, համօրէն հաւատացեալներու բացարձակ տէրն է: Թիւրք քաղաքականութեան ընդհանուր ոգին այս սկզբունքին մէջ կը կայանայ. և պատճառը այդ է որ Սուլթանը և իր քաղաքական ու կրօնական սատարակները Թիւրքի մէջ յառաջդիմական ամէն քաղաքականութեան յամառ ընդդիմութիւն ցոյց կուտան:

Այս տեսակէտով նայելու ենք Թիւրքի մէջ տիրող դրութեան վրայ: Թիւրքի իբր պետութիւն 18րդ դարէն սօցին անկումէ անկում կը դիմէ: Կր բուն ըմբօսա եկնիչէրներուն հետ մշտական կուլի մէջ ըլլալով և հետզհետէ ուստական սպառնալիքին տակ, Թիւրքի ստիպեցաւ անտեսապէս ճնշել իր հպատակ ժողովուրդները. ճնշում մը որ բնականաբար դիմադրութիւն առաջ պիտի բերէր: Յոյներն էին որ, առաջինը, 19 դարուն, էն բուն կոիւր մղեցին Թիւրքի դէմ: Ինչ եղաւ արդիւնքը այդ ազատամարտին:



Եթէ քննէք այս հարցը, պիտի տեսնէք որ Թիւրքիոյ մէջ իշխանութեան զլուս եղողները կազմ ու պատրաստ կեցած են, երբ ժողովուրդը լուրջ յարձակումի փորձ մ'ընել ուզէ կառավարութեան դէմ: Եթէ պատահի որ ժողովրդի ծոցէն, ազատութեան ու է կարևոր շարժում մը ծագի, ապստամբները ահաբեկելու համար խմբական կոտորած և արիւնահեղութիւն կը սարքեն: Թիւրք զօրապետները իրենց կանոնաւոր և պաշտպանութեամբ զօրքերը կ'արձակին մեծ մասով անգէն «չուն կեալուր-նեան» գէմ, և կը գրգռեն սնապաշտ խուժանին մոլեռանգութիւնը: Այսպէս եղաւ 1822 ին, Քիոսի կոտորածի ժամանակ, երբ, թիւրք ծովակալին առաջնորդութիւնով, մօտ 2000 անգէն յոյներ սարսափելի անգթութիւնով խողտողեցան (ժողովի կողմէն պարսաւի ձայնը):

Այս կոտորածը, իր անլուր խժգժութիւններով, ամբողջ Եւրոպայի մէջ, սոսկումի աղաղակ բարձրացուց: Խանդավառեցան յոյներուն համար, որոնք, դժնգակ կոիւններէ յետոյ, յաջողեցան Թիւրքիոյ լուծէն ազատել: Եթէ հոս Թիւրքիոյ մասին անխնայ կը խօսիմ, նորէն կրտսմ, իմ խօսքերս չեն ուղղւած ամբողջ թիւրք ժողովրդին, նոյնիսկ չեմ մոռնար որ այդ երկրին մէջ միշտ եղեր են հեռատես պետական գործիչներ, որոնք լուրջ բարենորոգումներ պահանջած են և բարեսէր մարդիկ, որոնք փորձած են թրքահայասակ ժողովուրդներու նիւթական և բարոյական կացութիւնը բարելաւելու: Գանձեցան մէկ քանի լուսամիտ կառավարիչներ և սուլթաններ, որոնք շատ լաւ որոշումներ կայացուցին, ինչպէս 1839 ին, Ապտիւլ Մեձիտ, որուն Նախարարն էր Ռեշիտ փաշան, Կիւսհանէի համբաւուար Խաթիբ-Շէրիֆը հրատարակելով, ուղեց բոլոր թիւրքիոյ մէջ կրօնական հաւասարութիւն հաստատել: Եւրոպայի մէջ մենք ամէնքս կրօններու հաւասարութեան կողմնակից ենք, մենք ամէնքս ալ համոզւած ենք որ ոչ ոք իր դաւանանքին համար պէտք

է հարածէի: Բայց Արևելքի մէջ տարբեր տեսակէտ ունի կրօնական պաշտպանութիւնը, և որ ամենամեծ կարևորութիւն տւած է Խաթիբ-Շէրիֆին: Այդ երկիրներու մէջ շատ յաճախ կրօնը և ազգութիւնը մէկ են: Թիւրքիոյ լուծին տակ կրօնը՝ ցիրուցան ժողովուրդներու ազգայնութեան կապն է. ատոր համար աւելի շահեկանութիւն ունի, քան ինչ որ նոյնիսկ, երբեմն եւրոպական ժողովուրդներուն համար: Անդիականի հաւատում մը չէ միայն, քրիստոնէականէ մը աւելի արժէք ունի և մանաւանդ զօրեղ միջոց մընէ ազգայնութեան նկարագիրը անաղարտ պահելու համար:

Ահա այս տեսակէտով պէտք է նայինք Արևելքի կրօնական հարցերուն վրայ. պէտք է գանձք դիտել մերինէն տարբեր երևոյթի տակ: Աերանորոգութեան շրջանի մեծ կոիւններուն առեն կրօնը միեւնոյն դերը խաղաց Եւրոպայի մէջ. յաճախ կրօնական վերանորոգումը կապուեցաւ քաղաքական և ազգային ազատագրութիւններու շարժման: Մանաւանդ Կալվինական երկիրներու մէջ յաճախ կրօնական բարենորոգումները միեւնոյն առեն քաղաքական բարենորոգումներ էին: Աչ մէկ տեղ ժողովուրդները այնքան հանրապետական բուռն զգացումներով սողորւած չեն, որքան Կալվինական երկիրներու մէջ: 1642 - 49 ի անգլիական մեծ Յեղափոխութիւնը, որ օրինակ եղաւ Փրանսիական մեծ Յեղափոխութեան, Կալվինական մտքի գործը և փաստակն էր: Կալվինականութիւնը այդ առեն կողեորէր շին Կտակարանով՝ որ հանրապետական ձգտումներ ունի և որուն առաջին մարգարէները հանրապետական գաղափարի համար պայքարեցան: Կալվինականները շին Կտակարանէն կը քաղէին իրենց քաղաքական իտէալը և գայն կը պաշտպանէին բացարձակ կառավարութիւններուն դէմ:

Մէկ քանի Սուլթաններ փորձեցին թիւրքիոյ մէջ կրօնական հաւասարութիւն հաստատել, բայց իրենց դէմ



գտան ժողովրդի մոլեռանդութիւնը ինչպէս նաև տիրող դասակարգերու չկամութիւնը, կազմակերպւած կղերականութիւնը և քաղաքական ու գիւնտորական պաշտօնեաներու հզօր կարգերը, որոնց դէմ խորտակեցան թիւրքիոյ լաւագոյն պետական մարդոց ամենալաւ դիտաւորութիւնները: Երբ փորձեր ըրած են բարենորոգումներ ընելու, անգիտակից և մոլեռանդ ամբոխէն բռնկող կազմակերպւած կղերին և փաշաներու ու իրենց ենթականերուն ուժեղ դիմադրութեան հանդիպած են. որոնք այնպէս մը կընէին որ բարենորոգումները չգործադրւին կամ հակառակ ուղութիւնով ըլլան: Ահա ինչ որ պատահեցաւ 1860 ին Սիւրիոյ մէջ, Վարօնիներու զօրեղ քրիստոնեայ փոքրիկ ագանդին: Վարօնիները փորձեցին զիրենք ձգմող ճնշումին դիմադրել, որուն իբր պատասխան Ղիբանանի մէջ կոտորած մը տեղի ունեցաւ, ուր սպաննեցան 6000 քրիստոնեաներ, հակառակ խաթաբ-չիւմայունի հրովարտարկին, որ կրօնական հաւասարութիւնը պիտի տարածէր: Բնականաբար Եւրոպա միջամտեց, և Ֆրանսան մասնաւորապէս, որ ինքզինք Վարօնիներու տիրական պաշտպանը կը համարէր: Բայց մեռելները յարութիւն չեն առներ և դրութիւնը առաջւայ պէս կը շարունակուի:

Գրամի անդուլ և յարաձուն պէտքին առջև թիւրքիան իր լուծը աւելի ծանրացուց Պալքանեան ժողովուրդներու ուսերուն վրայ, որոնք Փոքր Ասիոյ թրքական ժողովուրդներէն աւելի զարգացած են: Հէնց 1870 էն Սերպերը և յետոյ Պուլկարները սկսան շարժիլ: Սերպերը որոնք Խրիմի պատերազմէն ետքը աւելի մեծ անկախութիւն մը ձեռք բերած էին, կուզէին բոլորովին կտրել թիւրքիայէն: Պուլկարները կը պահանջէին առանձին սօցային կառավարութիւն մը ունենալու իրաւունքը, — ի հարկին թիւրքիոյ գերիշխանութեան տակ: Չէ կարելի բսել թէ ծայրայեղութիւններ չգործեցան

այդ ժողովուրդներու կողմէն. իրենց քաջածնեքէն սիրտերնին էրած, յաճախ իրենց մէջ ապրող թիւրքերուն գէշութիւններ ըրած են. ինչ ալ ըլլայ և ուր ալ պատահի, այսպիսի բաներ պէտք է ազդու կերպով պատարակել: Երբ ստուգենք որ Արէտէի մէջ, այսօր, մահմետականներուն հետ գէշ կը վարին, մենք պէտք է միջամտենք անոնց պաշտպանութեանը համար, ինչպէս ժամանակին ըրինք կրետացիներուն ի նպաստ:

Սահայն Պուլկարներուն գործած գէշութիւնները բան մը չէին այն վրիժառութիւններուն քով որ թիւրքիան գործեց իր հին սովորութեան համեմատ: 1876 ին թիւրք պաշըպօղուքներու ձեռքով մեծ կոտորածներ տեղի ունեցան Պուլկարիոյ մէջ: Մօտ 12-15000 Պուլկար սպաննեցան յաճախ ահարկու և աներևակայելի գազանութիւններով: Արայ հասաւ Ռուս-թիւրք պատերազմը. թիւրքիան յողթեցաւ և Պուլկարները վերջնական ազատուի մը կարեղութեան յոյսը ունեցան: Այդ ատենն է որ Եւրոպան միջամտեց և, Անգլիոյ թելագրութիւնով, Ահհաժողով մը գումարեցաւ Պերլին, կարգադրելու համար թիւրքիոյ վիճակը եւրոպական տեսակետով: Եւրոպական սոյն միջամտութիւնը հայերուն համար ոչ միայն օգտակար չեղաւ, այլ նոյնիսկ — ընդունւած կարծիք մընէ այսօր — վնասաբեր եղաւ անոնց:

Եւրոպայի կարգադրութեան ձեռք օգտակար չեղաւ նաև եւրոպական Սլաւներուն և Պալքանեան ժողովուրդներուն համար, ինչպէս վերջէն ցոյց տուաւ պատմութիւնը. աւելի արգելք եղաւ անոնց զարգացումին, քան ինչ որ չէր եղած Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնը: Պերլինի դաշնագրութիւնը ամենածիծաղելի կերպով կարգադրեց Պուլկարական հարցը: Պուլկարիոյ մէկ մասը, թիւրքիոյ հովանաւորութեան տակ, որոշ ինքնավարութիւն ձեռք կը բերէր. ուրիշ մը թրքական նահանգ կը մնար, իբր թէ ինքնավար. իսկ ամբողջ գաւառներ պէտք



էին ձեռք քաշել ամէն վարչական ազատութենէ: Այս բնակչութիւնները, թէև քաղաքականապէս բաժանւած, աշխարհագրորէն բովբովի կը բնակին, հետևաբար շատ բնական է որ անոնք, իբր ցեղակից տարրեր, քաղաքական միութեան ձգտին:

Եւրոպական համաձայնութիւնը ցոյց տուաւ իր քաղաքական անընդունակութիւնը՝ առկախ հարցերուն կիսակատար լուծումներ տալով, ինչ որ շատ անգամ աւելի վատ է, քան բոլորովին ձեռնպահ մնալը. չէ՞ որ, քիչ յետոյ, մենք տեսնեք Պալքաններու մէջ խռովութիւններ ծագելը: Մեր օրով տակաւին կը շարունակւի այս անստոյգ վիճակը. Պալքանները չեն խաղաղիւր: Պերլինի դաշնագրութիւնը թիւրքիոյ շահերուն ալ չկըրցու ծառայել: Մտիպած ըլլալով ամէն կողմ դուրք պահել, առկէ առաջ եկաւ հարկերու ահագին ծանրութիւն մը՝ որոնք գրեթէ ելեմտապէս կը քամեն այդ կործանաւեր երկիրը: Աերջնական ոչինչ որոշւած է, ոչ որ գոհ է, հրկիզումի նոր հնոցներ կը պատրաստին. ահա Պերլինի Ահհաժողովին արդիւնքը: Իսկ ինչ որ մասնաւորապէս հայերուն կը վերաբերի, Գաշնագրութիւնը, բոլոր Պետութիւններու հովանաւորութեան տակ գնելով գանձք, առիթ տւած է սա առակին՝ «երբ խոհարարները շատուր ըլլան, կաւրեն կերակուրը»: Հայերուն շատ թանկ նստաւ 1878 ի զիւանագիտական գլուխ գործոցը, որուն շնորհիւ բնաջինջ ըլլալու վտանգին մէջ են այսօր: (Հատմութիւններ):

II

Գանք թըքահայերու կացութեան:

Հայերը գրեթէ ցրուած են ամբողջ թիւրքիոյ մէջ, բայց մեծ մասը կը բնակի հին Հայաստանում՝ որուն մէկ մասը Ռուսիոյ ձեռքն է, միւսը Պարսկաստանի, իսկ

մեծ մասը թիւրքիոյ: Ըստ թիւրք պաշտօնական վիճակագրութեան, Փոքր Ասիոյ մէջ հայերուն թիւը 7-800 հազար է, սակայն սոյն վիճակագրութիւնը շատ հին է և յաճախ հիմնւած ծուխերու վրայ, բնակիչներու միջին թիւին համեմատ, որ կը համապատասխանէ թըքական կեանքի պայմաններուն:

Պէտք է նկատի առնել, որ հայ ժողովրդի մեծ մասը շատ նախնական պայմաններու մէջ կապրի, որ կը յիշեցնեն հեթանոս հաստատութիւնները. և յետոյ մէկ ընտանիքի երեք չորս պորտը միեւնոյն յարկի տակ կապրին, և ամէն մէկ տուն, միջին հաշուով ոչ թէ 7-8 հոգի է կը բաղկանայ, ինչպէս եւրոպական թիւրքիոյ մէջ, այլ կրկնապատիկը կամ եռապատիկն է:

Աւելի հեղինակաւոր անձերու լուրջ հետազոտութիւններուն նայելով հաւանական կերևի, որ թըքահայաստանի մէջ, կոտորածներէն առաջ, երկու միլիոնէն աւելի հայ կար: Անոնք կապրին քաղաքներու մէջ, որոնց մէկ քանին մինչև 60,000 բնակիչ ունին. գոյութեան պայմանները նոյնն են ինչ որ դար մը առաջ եւրոպական քաղաքներու պայմանները, ինչ ինչ առանձնայատկութիւններով, որ կըլիմայական տարբերութիւններու արդիւնք են: Ժողովրդին մեծ մասը կապրի գիւղերու մէջ և շատ նախնական ձևով, հայ ժողովրդի 80% ը մանր գիւղացիներ կամ արհեստաւորներ են:

Արեւմտ կարելի է հերքել հայ ժողովրդի գոյութեան միջոցներուն և հասարակական կացութեան վրայ տարածւած առասպելները թէ՛ հայերը միմիայն խոշոր վաճառականներ, գործաւորներ և չգիտեմ ինչ են:

Իրաւ է որ հայաստանէն դուրս թիւրքիոյ միւս երկիրներուն մէջ գաճուող հայերուն մէջ շատ մը վաճառականներ կան, երբեմն հանած վարած վաճառականներ այ կան, ինչպէս կան յոյներուն և ուրիշ ազգերու մէջ: Նմանօրինակ բաներ գրեթէ կը պատահին բոլոր մտաշ-

10-226  
19-1617





խոյժ ազգերու մէջ և որոնք, քաղաքականապէս, պետութեան մը մէջ երկրորդ կարգի քաղաքացիներ են: Ասոր մէկ դասական օրինակը ունինք կրօնական աղանդի մը մէջ, որ իր ծագմանը մէջ բարոյագիտական և գրեթէ ընկերվարական զգացումը ունէր, այն է Անգլիոյ Քուէյթ-քըրնները: Ասոնք բնաւ երգում չէին ընէր, այդ պատճառով ալ Անգլիոյ մէջ ոչ մէկ պետական պաշտօն չէին կրնար վարել, արդէն իրենց սկզբունքն ալ կարգիլէր ու է պաշտօն ընդունիլ:

Իրենց կրօնի խստութիւնը կարգիլէր զինւորութիւն ընել. չէին կրնար ուսանիլ անգլիական համալսարաններու մէջ, ուր մինչև 16րդ դարու կէսը անոնք միայն կրնգուներէին, որոնք պետական կրօնին կը պատկանէին. անկէ դուրս անկարելի էր հետամուտ ըլլալ ոչ արհեստի, ոչ պետական պաշտօններու, ոչ զինւորականութեան: Աւրեմ ի՞նչ կը մնար իրենց: Անոնք որ աշխոյժ մտքի տէր էին և զարգացած, վաճառական կը դառնային և յաճախ շատ աւելի լաւ վաճառական քան միւս ժողովուրդը: Ահա այսպէս, Քուէյթքըրնները, որոնք սկիզբէն ընչազուրկ աղանդ մըն էին, այսօր ամենահարուստ ընկերութիւն մը կը կազմեն:

Այսպիսի բաներ ստեպ պատահած են Արևելքի մէջ: Ժբաջան բայց հարստահար ժողովրդին տարրերը պէտք էին ու է կերպով գործ մ'ընել և բնականաբար վաճառականութիւնը ձեռքերնին ինկաւ: Վաճառական, սեղանաւոր և այլն հայերու մէջ շատ սահմանափակ դասակարգ մը կը կազմեն: Ժողովրդին մեծ զանգաճը գեղացիներէ բաղկացած է, և անոնք են որ, թրքահայաստանի մէջ ամենէն աւելի կը կեղերէին, կը հալածւին և չարաչար կերպով կը շահագործւին, և անոնց է, վերջապէս, որ մենք օգնութեան պիտի հասնինք:

Եւրոպական միջամտութեան ճնշման տակ թիւրքիոյ հրատարակած նիզամնամէները հայերուն պէտք էին

համհաւասար քաղաքացիական իրաւունքներ տալ. բայց միւս թիւրք պաշտօնեաները ազդեցութիւն բանեցուցին և կասեցուցին անոնց գործադրութիւնը կամ հակառակ ուղղութիւնով գործադրեցին: Ըստ Սահմանագրութեան հայերը պէտք էին հաւասար հողի վրայ ըլլալ թիւրքերուն հետ. բայց իրօք այնպէս չեն: Նախ որ, անոնք ճղմնած են թիւրքիոյ հարկային դրութեան տակ, որ կը ճնշէ զանոնք աներեւակայելի ծանրութիւնով մը: Ահա պղտիկ տեսութիւն մը թրքահայաստանի հայ գեղացիին վճարած տուրքերու մասին:

Երկու տեսակ տուրք կայ, օրինակամ տուրքեր և կամայական տուրքեր: Մի կարծէք թէ օրինական տուրքերը որոշ սահման մը ունին, ոչ, անոնք ուղածիդ չափ կընդարձակին և առաձգական են բառին ամենավատ իմաստով: Հայ գիւղացին, որովհետև մահմետական չէ, նախ ենթակայ է պէտէլիլէի, տեսակ մը գլխահարկ, որ կեալուրները պէտք է վճարեն զինւորութիւն չընենուն համար: Այսպիսի տուրք մը արդար կարող է երևալ, թէ և զինւորական ծառայութենէ ազատ ըլլալը, քաղաքական իրաւունքի նուազում մը կենթագրէ, որուն ենթակայ եղողները ստորագաս վիճակ մը կունենան: Նորածիններն ալ պէտէլիլէ կը վճարեն: Զինւորական ծառայութեան իբր ուրիշ փոխարինութիւն, գիւղացիները կաշխատեցին ճամբաներու շինութեան և տարապարհակ աշխատութիւններու, ատոր հետ մէկտեղ անձնական տուրք մ'ալ պէտք է վճարեն:

Երկրորդ տուրքն է ըմտամեկան տուրքը, Սալիամ ըսած, որ հաստատուած է քաղաքներուն կամ գիւղերուն համար, որուն բաշխումը կըլլայ հայկական գիւղերու կամ քաղաքներու թաղ. Խորհուրդներուն ձեռքով: Այնպէս մը ըրած են որ հարուստ ընտանիքները աղքատներուն համար ալ վճարեն, որով ամէնուն մէջ ուժեղ համերաշխութիւն մը կը գոյանայ: Երբ տուրքը, որուն



քանակութիւնը պետութեան և պաշտօնեաներու պէտքերուն համեմատ նշանակեալ է, որոշ սահմանը կանցնել, բոլոր գիւղին բարգաւաճումը կը կասի:

Յետոյ կուգան, շինութեանց վրայ տուրքերը և հողային տուրք — արագիւտ: Այս վերջինը հողին արժեքին վրայ չէ հիմնեալ, այլ տարածութեան վրայ. յետոյ ոչխարի տուրքը (Աղնամ վերկիսի), այն կերպով հաստատուած որ, գործընկեր, գառի մը համար որ համեմատաբար չնչին գին մը ունի, պէտք է վճարել տարեկան 5 դահեկան: Այս տուրքերուն, որոնք ի հարկին տանելի են, պէտք է աւելցնել հողային արդիւնաբերութեամբ վրայ հարկը (Աշար), որ բոլորովին կը քամէ գիւղացին՝ որովհետեւ ստիպուած է հարկահանին տալ հողէն քաղած բոլոր բերքերուն մէկ մասը. օրէնքով, ութէն մէկը պէտք է տայ, բայց իրականութեան մէջ՝ հայերէն 20, 40 մինչև 60 կառնէն: Այսպիսի հսկայածանը հարկային դրութեան տակ գիւղացիին կը մնայ յուսահատութեան դիմել:

Եթէ գոնէ այս հարկերը քիչ շատ կարգի կանոնի մտած ըլլային, հայերը, իրենց արեւելեան համբերատարութիւնով, յօժարովին պիտի ընդունէին, բայց դժբաղդաբար այնպէս չէ:

Թիւրքիան կը բաժնուի վիլայէթներու, և իւրաքանչիւրը կը կառավարուի փաշայով մը: Կառավարութիւնը՝ որ գրեթէ գրամ չունի, չվճարեր փաշաներուն, որոնք, սակայն, ըստ հին սովորութեան, թէ կուզեն պէ՛յի պէս ապրիլ և թէ հարստանալ: Ամսաթոշակները եթէ ժամանակին չհասնին, վալին իսկոյն նեղը կը լծէ իր պաշտօնեաները՝ որոնք, իրենց կարգին, կը ճնշեն աղքատ ժողովուրդը: Ինչպէս կրնէին Եւրոպայի մէջ 18 դարուն, հարկահանութիւնը աճուրդով, վարձու կը տրուի, և վարձակալը իր տրամարդութեան տակ ունի գապթիէն: Այլ ևս կրնաք դատել թէ ինչ պէտք է ըլլայ հարկատուին

վիճակը, եթէ մտաբերենք թէ վարձակալը ինքն ալ կուզէ իր բեռը բռնել:

Տասը տարին անգամ մը տուրքերը կաւելնան, ծանրաբամ ընելով հայ գիւղացին. վերջապէս ամենագառնուկ մարդը իսկ կ'ընդվզի երբ կը տեսնէ թէ կը խեղդեն զինքը: Այս պայմաններուն մէջ չէ կարելի պահանջել մարդոցմէ որ հրեշտակներ ըլլան:

Հայերուն զէնք կրելը արգիւրեալ է. ինչպէս ակա՛նատես եղանք, ժամանակի ընթացքին մէջ անոնք մոտնալով պատերազմական առաքինութիւնները, սարկական սովորութիւններ ստացան և այնպէս ալ կը վարուին հետերնին:

Այն նկարագրութենէն յետոյ, մենք դեռ չվերջացուցինք հայահալած կեղեքումները: Քիւրտերը հայ գիւղացիին վրայ կը նային ինչպէս կ'ըման կովի վրայ: Երբ հայուն տաւարները ծնին, քիւրտը և չէրքէզը, իբր տուրք, անոր մէկ մասը իրենց կառնեն: Ժամանակ մը որոշ չափ մը կը պահէին, և պէտք ունենալով գիւղացիին, անկէ ամէն բան չէին խլեր: Բայց այն օրէն երբ դրամի շրջաբերութիւնը մուտ գտաւ Արեւելքի մէջ անոնք ալ ուղեցին դրամի տէր ըլլալ և աշխատեցան ամեն կերպով պոկել հայ գիւղացին: Քիւրտերը և թիւրքերը արհամարանքով կը նային հայերու վրայ, իբր ստորնագոյն ցեղի մը վրայ, նոյնպէս և չեքէզները:

Այսպէս հայ ժողովրդի բեռն ու հարստահարութիւնը տարւէ տարի կաւելնան. եթէ Պոլսոյ կառավարութիւնը, նոյնիսկ անկեղծ կամք ունենայ անոնց օգնութեան հասնելու, բացարձակապէս անկարող է ներկայ կառավարական սիստէմով:

Կառավարութեան մը կոչումն է կամք և ուժ ունենալ՝ պաշտպանելու քաղաքացիները իրենց կեանքի և սեփականութեան մէջ: Կառավարութիւն մը եթէ չկրնար այս պարտականութիւնները կատարել, իբր անկարող,



Տրաժարելու է: Սուլթանի կառավարութիւնը այդ պարագային մէջ կը գանձէի, որովհետեւ ցարդ չէ կրցած քիւրտերուն և չէրքէզներուն չարութիւններուն դէմ պաշտպանել հայերը և ոչ ալ կրցած է պաշտպանել գանձը փաշաներու և պաշտօնեաներու կեղեքումներու և յափշտակութիւններուն դէմ:

Հակառակ այդ ամենուն, հայ ժողովուրդը իր յուսահատութեան մէջ սիրտ առաւ և իր անկախութեան տենչը աւելի ամրապնդուելով կազմակերպուեցաւ. և ուրիշ ու է միջոց չտեսնելով, իր փրկութիւնը ինք իր ձեռքով կը պատրաստէ:

✓ Չեմ կրնար բնել թէ հայ յեղափոխականները պաշտօնեաներու կամ անոնց արքանեակներուն դէմ բռնութիւն գործ դրած չըլան. բայց, մեր նկարագրած պայմաններուն մէջ, իրենց արարքը այնքան մարդկային է որ չէ կարելի պատարակել: Նոյնը պատահելու է երբ ժողովուրդ մը կամայականութեան մատնուած է, երբ հարստահարուողը չկրնար իր իրաւունքները բնել ընել տալ. այդպիսիներու ուրիշ բան չմնար բայց եթէ դիմել բնական իրաւունքին և կուէլ ինչ գէնքով որ ձեռքը անցնի: ✓ ժողովրդի մը «բանը բուրդ է» եթէ ծայրայեղ դժբախտութիւններէն ապաստելու համար չգործածեր ամէն միջոց:

✓ 1878 թ Պերլինի դաշնագրութիւնով Եւրոպան յանձն առած էր հսկել հայերու իրաւունքներու պահպանութեան: Ժամանակ ժամանակ ստորագիր պետութիւններէն մէկը թիւրքիոյ մէկերկու խելօք խրատներ կուտար՝ որոնք ոչ մէկ ազդեցութիւն չըրին. թիւրքիան բանին չեկած խրատներէ փախ տալ շատ լաւ գիտէր: Միշտ միեւնոյն առասպելն է որ կը հրամցնէ Եւրոպայի. թէ հայերուն խռովութիւնները դրսէն եկած գործիչներու արդէնք են: Միւս կողմէ, պարբերաբար, իր ժողովրդի մոլեռանդութիւնը կը գրգռէ կեանքներուն դէմ և կուտորել կուտայ որպէսզի անոնց աչքը փակցնէ:

✓ Ն. յսպիսի գործողութիւն մը կատարուեցաւ 1894 Վեպտեմբերին Սասունի և շրջականերուն մէջ ուր 2000 հայեր փայրենի գազաններու պէս մորթուեցան: Պարագաները այնքան զարհուրելի էին, թիւրք մեծամեծ պաշտօնեաներու մեղաւկցութիւնը այնքան ակնյայտի, որ պետութիւնները հարկ համարեցին միջամտել: Քննիչ պաշտօնեաները, որոնք ոչ խռովարարներ, ոչ ալ հայասէրներ էին, այլ պետութեանց հիւպատոսներ և յատուկ ներկայացուցիչներ, այն համոզման եկան թէ, թիւրք կառավարութիւնը, յանձին իր բարձր պաշտօնեաներուն, լիովին պատասխանատու է այս բարբարոս խժոժութիւններուն:

✓ 1895 Մայիս 11 թ Յիշատակագրով մը՝ Պետութիւնները թիւրք կառավարութեան ներկայացուցին Բարեմորոգումներու ծրագիր մը, որուն արդարացիութիւնը Սուլթանը ուղղակի չհամարձակեցաւ ուրանալ: Ն. յդ ծրագիրը ազգային կամ՝ Նահանգային անկախութիւն չէր պահանջեր հայերուն համար, այլ միմիայն անոնց իրաւունքներուն պաշտպանութիւն և կառավարչութեան արդարագատ կազմակերպութիւն մը:

✓ 1895 մայիս 11 թ Յիշատակագիրը ցոյց կուտար թէ՛ նահանգական և շրջանական փարչութիւններու ինչպէս նաև քաղաքապետութիւններու մէջ, ուր համեմատական մեծամասնութիւն կը կազմեն՝ հայերը իրենց ներկայացուցիչները ունենալու էին, այնպէս որ, օրէնքները, ինչքան ալ գէշ ըլլային, գոնէ անկողմնակալօրէն գործադրելու երաշխաւորութիւնը պիտի ունենային: Վիլյա-յէթներու թիւր պիտի քիչցուէր: 1877 ին է որ անոնց թիւր բազմապատկեցին շատ մը փաշաներու պաշտօն հայ-թայթելու համար, և որքան փաշաները շատնան իրենց խոնարհելով, այնքան աւելի ժողովրդին ծանր կը նստին: Թըքահայաստանի մէջ շատ անգամ վիլյաթթ մը աւելի փոքր է քան Եւրոպայի մէջ՝ երկրի մը մէկ շրջանակը և



վաղին հուզէ իշխանական կեանք վարել: Պետութիւնները հուսակարութիւններու թւի նուագումը յանձնարարած էին, որպէս զի երկրորդականներու սահմանները վերանորոգելու առթիւ, ազգայնական համախմբումներու վերաբերմամբ մեծագոյն համասեռ բնակչութիւնը կարելի ըլլայ իրագործել:

1895 հոկտեմբեր 22 ի երկարատե բանակցութիւններէն յետոյ, թիւրքիան խոստացաւ — արդէն միշտ մեծամեծ խոստումներ ըրած է — նօթայի առաջարկները կատարել: Սուլթանը Անգլիոյ նախարարապետին, Լորտ Սոլզբրիի իմացուց որ նօթան անյապաղ կիրագործելի և մինչև իսկ պատուոյ խօսք տուաւ: Բայց ի՞նչպէս պահեց իր խոստումները, ինքը և իր պաշտօնականները:

Սարքեցան անսահման և միահամուռ կոտորածներ հայ ժողովուրդը բոլորովին բնաջինջ ընելու համար. սրածուծութիւն մը, որուն նմանը պատմութիւնը երբէք չէ տեսած՝ այնքան մեծ և այնքան անողորմ:

Բնաւ տարակոյս չկայ որ Ա. Պօլսէն քաջալերեցան այդ բարբարոսութիւնները: Անշուշտ ծանր ամբաստանութիւն մըն է որ կընեմ, սակայն իրազեկ և պատասխանատու պետական անձնաւորութիւններ, ապացուցեցին այս մասին Սուլթանի մեղսակցութիւնը, արժանահաւատ տեղեկագրեր հաստատեցին անոր պատասխանատուութիւնը. թէ այս բոլոր անգթութիւնները անոր հրամանով և հաճութիւնով գործւած են և նոյն իսկ շատ մեղով մարդիկ անոր մարդասպան տիտղոսը աւին: Այսպէս ուրեմն, 1895 հոկտեմբեր 2 ին մարդասպանը գործի կսկսէր: Նոյն օրը կըսկսէր Տրապիզոնի Զարդը, ուր սպաննեցան 600 հոգի քաղաքէն և 107 հոգի շրջակայ գիւղերէն: Առաւմարութեան պաշտօնականները այդ ոճիրը անպատիժ ձգեցին և իրենց թոյլատու և քաջալերող ներկայութեան, կոտորածները ահաւելի և հրեշային եղան:

Ահա քանի մը թիւեր, որոնք մասնաւորներէ կամ

միսիօնարներէ չեն, այլ հիւպատոսարանի պաշտօնականներէ, և քաղաք են գետապաններուն իրենց կառավարութիւններուն զրկած պաշտօնական տեղեկագրերէն: Մեծ մասով բացէ իբաց կը մեղագրեն, անուններն ալ տալով, սպաներ, պաշտօնականներ որոնք հաճոյակատարօրէն հանդիսատես և մինչև իսկ հեղինակները և առաջնորդները եղած են այս սպանութիւններուն ու թալաններուն: Այդ տեղեկագրերուն համաձայն 1895 հոկտեմբերի և նոյեմբերի կոտորածի զոհերուն թիւը հետեւեալներն են:

Երզրում՝ 400, Բաբերդ՝ 1350, Պայազիա՝ 500, Պիթլիս՝ 800, Արաբկիր՝ 2800, Խարբերդ՝ 500, Մալաթիա՝ 3000, Սվազ՝ 1500, Տիգրանակերտ՝ 1200, Կիւրիւն՝ 1000, Այնթապ՝ 1000, Մարաշ՝ 1350, Կեսարիա՝ 1000: Այս զոհերու մեծ մասը անգէն և բացարձակօրէն անկարող էին ինքնապաշտպանութեան (գայրուքի ցարմումներ):

Արդէն այս թիւերը կսկծագին կը հնչեն մեր ականջներուն, բայց եթէ դուք կարդաք այս սպանութիւններու նկարագրութիւնները, եթէ իմանաք թէ ինչ պայմաններու մէջ սպաննւած են մարդիկ, կին, ծեր, մանուկ, ինչ անգթութիւնով և ինչ գազանութիւնով գործւած են այդ ոճիրները, և ինչ նրբանուրբ ու դիւային յօշոտումներ՝ — որուն ընդունակ են միայն արեւելցիներու մոլեռանդութիւնը և մտաբորբոքումը — ընկերացած են այդ ամենուն, այն ատեն դուք պիտի հասկնաք որ անգլիացի պետական մարդ մը, որ զգայապաշտ մէկը չէ, կարող եղած է բսել թէ Հայաստանի կոտորածներու տեսիլքը գիշերները իր քունը կը խռովէր: Մանուկներ իրենց ծնողքներուն աչքին առջև ամենալայրազօրէն խողխողւած են, յղի կիներու արգանդները իրենց ամուսիններու ներկայութեան ճեղքւած և տղամարդիկ սպաննելէ առաջ խայտառակ կերպով անդամատուած են:

Թերևս փախտականներուն կամ ողջ մնացածներուն գրգռւած երևակայութիւնը շատ բան չափազանցեց.



բայց եթէ այս բոլոր գրոյցներէն կէսը նոյնիսկ կամ երեք քառորդը կրճատենք՝ դեռ կը մնան խելքէ մտքէ չանցած այնքան գազանութիւններ որքան մարդ չպատահիր պատմութեան ընթացքին մէջ: Բացի կոտորածներու մէջ մեռածներէն, քանի հազարաւորներ վիրաւորւեցան, քանի քանիներ ցաւագին մահ մը ունեցան բանտերու և կարծեցեալ հիւանդութիւններու մէջ: Ասկէ գտաւ, թիւրք զինուորները իրենց սպաներուն հետ խօսքմէկ աւարի տուին գեղ ու քաղաքներ և զանոնք մոխիր դարձուցին:

Պատմութեան տարեգրութիւններուն մէջ փնտռեցէք որքան կուզէք, ամբողջ ժողովրդի մը դէմ գործւած այսպիսի վայրագութիւններու օրինակներ չէք գտներ:

Ս. Բարգոյիմէոսի գիշերաջարգը, Տրօկէտայի կոտորածը, 1792, 1848ի 1871 արիւնահեղ կռիւները, նոյնիսկ Քիոսի, Ախրանանի և Պուլկարիոյ ջարդերը կը նսեմանան Սուլթանի պաշտօնեաներուն հովանաւորութեան տակ կամ անոնց հրամանով Հայաստանի մէջ գործուած արիւնուշա շուայտութիւններուն առջև, կատարւած ժողովրդի մը դէմ, որուն միակ յանցանքն է եղած հակառակիչ հարստահարութեան մը՝ որ նոյնիսկ գայրոյթ պատճառած է Եւրոպայի յետագէմ կառավարութիւններուն, և որ պէտք է ըմբոստացնէ ամէն զգացումի տէր մարդ:

Արդ, գանձեցան մարդիկ, որ նոյնիսկ այսպիսի պարագաներու մէջ, պաշտպանեցին թիւրքիան և այս բոլոր հաստատուած գազանութիւնները ծայրայեղ չափազանցութիւններ համարեցին: Երբ ես կը դայրանայի որ մեր մէջ ոչ մէկ բողոքի ձայն չբարձրացաւ, լաւագոյն բարեկամներէս մէկէն նստակ մը ստացայ, որուն գլխաւոր կէտերն էին. առաջին՝ թէ թիւրքիոյ մէջ հայեր չկան, երկրորդ՝ թէ հայերը շատ երջանիկ էին հոն, փերջագէտ՝ թէ ապստամբողները ուստական գործիչներ

էին: Կան մարդիկ որ Ռուսիոյ դէմ ունեցած արդար առելութենէն, պաշտպան կը կանգնին թիւրքիոյ:

Թիւրք կառավարութիւնն ալ իր կողմէն բնականաբար փորձեց ուրանալ. չկրցաւ ժխտել կոտորածները, բայց հիւպատոսներու տուած թիւին հանդէպ ծիծաղելի թիւ մը ներկայացուց:

Տօք. Յ. Ագափուս, իր «Հայաստան և Եւրոպա» գրքին մէջ համեմատութեան կը դնէ թիւրքիոյ պաշտօնական վիշակագրութիւնը և Եւրոպայինը: Զոն ուր եւրոպացի ճամբորդները կամ պաշտօնեաները սպաննւածներու թիւը 10,000 կը հաշուեն, Սուլթանի պաշտօնեաները հազիւ հազար կը գտնեն: Թիւրք կառավարութիւնը իր ակնոցին միջէն է որ կը տեսնէ իր զօրքերու կատարած ջարդերը, իր «չքերը կը խիւսն» երբ ոճիրի մը մէջ իր պատասխանատուութիւնը կայ: Թիւրք կառավարութեան ականջները խուլ են Հայաստանէն Վասիոր հասած յուսահատութեան ձիչերուն:

Եթէ Պետութիւնները չստիպեցին Սուլթանը, որ բարենորոգումները գործադրէ, ինչպէս խոստացած էր, անոր համար է որ Արևելքի մէջ հակընդդէմ շահեր ունէին՝ որով իրար կը չէզոքացնէին: Ռուսաստանը այս պահուն անյարմար կը տեսնէր Սուլթանի օձիքէն բռնել որովհետև իր գործին աւելի կուգար՝ եթէ թիւրքիան եղածին պէս մնար, միւս կողմէն Անգլիան Հնդկաստանի հիւսիսային արևմտեան լեռնականներուն հետ կուր բռնւած էր: 1895ին Անգլիոյ մէջ ազատական կառավարութեան տեղ պահպանողականները անցան: Ազատական վարչութիւնը թիւրքիոյ անկարգութիւններուն հակառակ էր և քանիցս սպառնաց Սուլթանի դէմ խիստ ընթացք բռնել: Պահպանողական վարչութիւնը այնպէս կերեւէր թէ կուզէր շարունակել նոյն քաղաքականութիւնը, սակայն այդ ժամանակ Հնդկաստանի լեռնագաւառներուն մէջ ապստամբութիւններ ծագելով՝ որոնք մահմէտական



միսիօնարներու կողմէ քարոզած էին, կարծել աւելն թէ Սուլթանի մատը կը խաղար այդ խոռովութիւններուն մէջ. այնպէս որ եթէ Անգլիան աւելի զօրէր, կարող էր Հնդկաստանի բոլոր մահմետականները ոտք հանել խալիֆային պաշտպանութեան համար: Ահա այս պատճառով անգլիական կառավարութիւնը թուլցաւ: Քրանսա և Գերմանիա Ռուսիոյ հետ էին: Սուլթանի կառավարութիւնը քէյֆը չէր աւրեր: Բողոքները ամենամեծ անտարբերութիւնով ընդունեց և հանդարտօրէն շարունակեց կոտորել հայերը: Հետեւեալ ամիսներուն շատերը խմբովին թրքացուցին:

1896 օգոստոսին Յեղափոխականները Պետութիւններուն ցոյց տալու համար ժողովուրդին յուսահատութիւր, յանդուգն կերպով դրուեցին Պոլսոյ Օսմանեան Պանքան, յուսալով պետութիւններէն խել բացայայտ խոստումներ: Յուսախար եղան, և այդ ցոյցին միակ արդիւնքն ան եղաւ, որ թիւրք կառավարութեան պատրուակ տուաւ փոքր կոտորած մը սարքելու Պոլսոյ մէջ իբր վերջարան Հայաստանի կոտորածներուն: Այդ համայնաճարդին մէջ 6000 հոգի սպաննուեցան, ծովը նետուածներն ալ առանձին: Մայրաքաղաքի ամբողջ խուժանը հայերուն վրայ թափեցաւ, Սուլթանի թիկնապահներուն գրգռումով և հովանաւորութիւնով: Այս ամէնը կատարեցան եւրոպական դեսպաններու աչքին տակ, որոնք ոչինչ ըրին այդ ոճիրի քաւութեան համար: Նորէն յայտագիր մը խմբագրեցին, դարձեալ Սուլթանի պատասխանատուութիւնը հաստատեցին, բայց առկէ անդին չանցան:

Պարզ է որ կոտորածները, հրդեհները, թալանները իրենց ետեւէն կը բերեն սով: Եւրոպայի մէջ շատ մը տեղեր հանգանակութիւններ եղան, բայց հաւաքած նպաստները անբաւական եղան բոլոր թշուառութիւնները ամբքելու և հագարաւորներ մեռան անօթութենէ և հիւանդանոցներու մէջ: Յայտագրեր փոխանակեցան, բայց

չերեիր որ ճնշում բանեցուցած ըլլան Սուլթանին, որ բարեբաւէ հայերու դրութիւնը:

Հայ ժողովուրդը ոչինչ կրնայ ընել ինքնին, օգնութիւնը Եւրոպայէն կապաւի: Պետութիւնները խոստացած են իրենց պաշտպանութիւնը, երբ չեն կատարեր պարտականութիւննին, ըսել է թէ կը բռնաբարեն դաշնագիրը: Եւ որովհետեւ կառավարութիւնները իրենց պարտականութիւններուն մէջ անհոգ են, հայերը՝ ժողովուրդներուն մէջ կը փնտռեն այժմ իրենց պաշտպանները, յուսալով որ անոնց ձայնը պիտի կրնայ ստիպել իրենց կառավարութիւնները Սուլթանի դէմ ազդու կամք բանեցնելու: Արեւելցիները ուժեղ կամքի առջև միայն տեղի կուտան, անոնք հազարումէկ փախուստի միջոցներ ունին ձգձգելու կամ անվերջ խոստանալու այն միջոցները՝ որ երբէք պիտի չգործադրեն, բայց միշտ տեղի կուտան երբ դիմացնին ուժ կը տեսնեն:

Արդէն ըսի թէ Սան Սթեֆանօյի դաշնագրութիւնը՝ որ Ռուսիան Թիւրքիոյ ձիար պլլեց, 1878 մարտին, շատ աւելի օգտաւէտ էր հայերուն քան Պերլինի դաշնագրութիւնը: Անգլիան, Պիքսօնֆիլտէն աւաջնորդած, Սան Սթեֆանօյի դաշնագրութեան դէմ միջամտեց: Շատեր հլացան այս մարդուն վրայ, բայց կարծեմ թէ իբր պետական մարդ, անոր վերագրած համբաւը չափազանցած է: Ամէն պարագայի մէջ ինչ որ ստոյգ է, ան է որ իր պետական ենթաբարտուղարը, Լօրա Սօլդարի, այսօր Անգլիոյ արտաքին գործոց նախարար, որ Պերլինի վեհաժողովին, և 1876 ին Պոլսոյ Դիսպանախորհուրդին մէջ Անգլիան կը ներկայացնէր, ստիպած եղաւ դատապարտել իր նախկին պետին գործը: Եւ Սօլդարին Թիւրքիոյ խայտառակութիւններուն հանդէպ բաւական քաջութիւն ունեցաւ անկեղծօրէն բոլոր ժողովուրդը լուսաւորելու: „1878 ին, ըսաւ, սխալ մը գործեցինք, պէտք է խոստովանիլ, 1878 ին մեր փողը անպիտան ձիւ մը



վրայ խաղացինք, այսինքն կառավարութեան մը վրայ որ ոչ կարելիութիւնը ոչ ալ կամքը ունի, իր երկրին մէջ ընել այն բարենորոգումները, որոնց համար Անգլիան 1878 ին իր աջակցութիւնը նւիրեց: Սակայն և այնպէս Սուլղպրին, մեր յայտնած պատճառներով, չէր ուզեր որ Անգլիան մինակ բռնել թիւրքիոյ հետ, անոր ուզածը պետութիւններու համերաշխ գործակցութիւն մըն էր: Բայց, մինչև օրս, անոնք չկրցին միանալ, եթէ ոչ Սուլթանին նօթաները և խոստումները ընդունելու համար: Այժմ, Ռուսիան կը պաշտպանէ Սուլթանը և Ֆրանսան Արևելքի մէջ Ռուսիոյ հետ մէկ ծակէ կը նային: Յուսանք որ այս դրութիւնը վերջ մը գտնէ:

Երկրորդ իրողութիւն մը: Արտասահմանի հայերը Սասունի և Մուշի գաւառներէն լուր ստացած են թէ՛ նոր կոտորածներ կը պատրաստուին: Երբ քիւրտերը կը զինուին, երբ կառավարութիւնը կանոնաւոր գործ կը զրկէ հայկական նահանգներու մէջ՝ նշան մըն է թէ՛ հրդեհներ շուտով պիտի բռնկի և կոտորածը տեղի պիտի ունենայ:

Այս պարագային հայերուն գործը վատ է. անգէն, զիմազրութեան չնչին միջոցներով, լոկ իրենց ուժերով անկարելի է որ վտանգէ գերծ մնան: Բայց անոնք կը յայտարարեն այս բաները արտասահմանի մէջ, և Փարիզի հայերը քանի մը քաղաքական անձնաւորութիւններու զիմեցին, ի միջի այլոց շատ մը ընկերվարականներու (Ժօրէս, Պրէսանսէ, Սանպա) խնդրելով որ այս լուրերը Ֆրանսական Արտաքին Գործերու Նախարարին ահանջը հասցնեն: Տէլքասէ Պատգամաւորութեան բացէիբաց խոստացաւ որ Ֆրանսական կառավարութիւնը քեմիսէրներ պիտի զրկէ ջարդի երկիւղ եղած նահանգները հակելու համար: Այս առաջին միջոցը բացարձակ երաշխաւորութիւն մը չէ հայերուն համար քրդերու շարագործութիւններուն դէմ, բայց գոնէ աւելի մեծ պաշտպանութիւն մը հաւանական ցոյց կուտայ:

Ինչ որ տեղի ունեցաւ 1896 ին Պոլսոյ մէջ, Գեպարտներու աչքին առջև, բնականաբար կրնայ կրկնուիլ 1902 ին սոյն հեռաւոր նահանգներուն մէջ, Ֆրանսական Բօմիսէրներու ներկայութեամբ. սակայն և այնպէս հաւանութիւն կայ որ եւրոպացիներու ներկայութիւնը թերևս կրնայ քիչ վախ ազդել: Տարակոյս չկայ թէ Սուլթանի գործակալները մտադիր են վերանորոգել իրենց արիւննուշա շահատակութիւնները: Անշուշտ 95-96 ի կոտորածներու նման կոտորածներ չեն ըլլար ամէն տարի, բայց թիւրք կառավարութիւնը դեռ, այսօր իսկ, պատրաստ կերևի ամէն տեսակ շարագործութիւններ վերակրկնելու: Հայ ժողովուրդը կորաքամակ, անկարող է ինքնապաշտպանուիլ, թիւրքը անոր կոկորդին վրայ կոխած է, ինչպէս պիտի ընէին շղթայակապ շան մը:

1900 ին Փարիզ գումարեւած միջազգային ընկերվարական համաժողովը, որոշում մը ընդունեց որով իր խորին զգւանքը յայտնելով Հայաստանի կոտորածներու մասին, կը նշաւակէ դրամատիրական կառավարութիւնները, որ ազդու կերպով չմիջամտեցին Սուլթանի մօտ, և հրաւեր կրնէ խորհրդարանի Գործաւորական երեսփոխաններուն, որ անընդհատ ձայն բարձրացնեն պետութիւններու անտարբերութեան դէմ հայերու պաշտպանութեան համար: Նոյնպէս, Պրիւքսէլի մէջ, շատ չըններ, Միջազգային Ընկերվարական Պիւրօն, բոլոր ընկերվարականներուն շրջաբերական մը զրկեց յորդորելով զանոնք որ Հահագրդուին Հայաստանով և իրենց ձայնը լսելի ընեն անոր պաշտպանութեան և օգնութեան համար:

Մարտ 3 ին Գերմանական խորհրդարանին մէջ, մեր բարեկամը Վ. Կրոստնաուէր այս իմաստով խօսեցաւ հայերու դրութեան մասին. խիստ հրահանգիչ և շատ չափաւոր ձառի մը մէջ կայսերական կառավարութեանէն խնդրեց, որ 1878 ի Պերլինի գաշնագրութիւնը գործադրել տայ և բաւական է որքան անտարբեր մնաց թըր-



քական անիրաւութիւններուն դէմ: Քանի մը տեսակէտներով Արամասուէր, բաւականին հեռատես չեղաւ. իր ճառին մէջ իրար խառնեց ուրիշ հարցեր որոնք Վերմանիոյ արտաքին քաղաքականութենէն գուրս էին: Նախարարպետը, Աոմս Պիւլօվ, այս աւթիւ սա հեշտ պատասխանը տուաւ թէ Վերմանիան ամէն տեղ չէր կրնար Հանս Տամիֆի դերը խաղալ:

Մենք համաձայն ենք այս կէտին վրայ, ա՛յո, կը փափագինք որ Վերման կառավարութիւնը ամէն տեղ Հանս Տամիֆի դերը չխաղայ. մենք չենք պահանջեր որ ուրիշ երկիրներու ամէն գործերուն մէջ ցուցամուտութիւն ընէ: Բարեսիրութիւնը նախ տունէն կսկսի. բարի օրինակը այսօր մեր ճանչցածներուն մէջ ամենալաւ փրօփականտիտան է: Մակայն հայկական հարցին մէջ դաշնագրութիւն մը կայ որ պէտք է գործադրելի. և Աոմս Պիւլօվը շատ լաւ գիտէ թէ հայերը անկարող են ինքզինքնին պաշտպանելու և թէ օգնութիւնը դրսէն պէտք է գայ: Իր չընդունելուն բուն պատճառը բոլորովին ուրիշ է: Վերմանիան այս բոլորէն կարգ մը շահեր ունի աչքի առած Փոքր Ասիոյ մէջ, և իր ղեկավարները օգտակար կը գըտնեն Սուլթանի հետ բարեկամ մնալ:

Չեզի ծանօթ են այս շահերը, այն է Անատոլուի և Պաղատաի երկաթուղիները: Իբր Ընկերվարական, մենք սկզբունքով ու եւ առարկութիւն չունինք, որ Վերմանիան այդ երկաթուղիները շինէ: Եթէ գերմանական դրամագրուլը և աշխատանքը Փոքր Ասիոյ մէջ երկաթուղիներ կը շինեն, ապագային շրջակայ ժողովուրդներուն օգտակար պիտի ըլլայ: Մակայն ի՞նչու հայ ժողովուրդը գոհ երթայ այդ ձեռնարկներուն. ընդհակառակը, ի՞նչու նկատի չառնել Հայաստանի բարգաւաճումը, եթէ կը փափագինք որ այս երկաթուղիները ապագային հասոյթի աղբիւր մը դառնան և գործունեայ վաճառականութիւն մը ծաղկի այդ գծին վրայ: Ճիշտ է որ, գլխաւոր գիծը

Հայաստանի մէջէն չանցնիր, բայց շատ քովէն կանցնի:

Չէ՛, պէտք չէ հայերը սարսափեցնել անոր համար որ Վերմանական դրամագրուլը այս բոլորէն շահեր ունի Փոքր Ասիոյ մէջ: Մենք պարտաւորութիւններ յանձն առած ենք դէպի հայերը, որը պէտք է կատարենք. աւելորդ վախ է թէ Սուլթանը երկաթուղիներէն կառնէ իր վրէժը, մանաւանդ հիմայ, երբ պետութիւնները ինպատակ հայերուն համաձայնութեան մը գալ կը թուին. և Արևելցին, ինչպէս ըսի, մենակ ուժին առջև կը խոնարհի: Ուժը Եւրոպայի կողմն է. եթէ Եւրոպան ուզենայ, Սուլթանը տեղի կուտայ. թող կատարելի Հայաստանի մէջ իրական բարենորոգում մը և ահա Թիւրքիոյ բոլոր ժողովուրդները պիտի ազատագրուին, որովհետև անկարելի է որ Հայաստանի մէջ եղած ճշմարիտ բարենորոգում մը Թիւրքիոյ մնացած մասին վրայ չտարածուի:

Այժմ աւելի մօտէն դիտենք Վերմանական պատմութիւնը և տեսնենք թէ ինչ եղած է իր միջագային դերը: Շատ խուսաժ է Վերմանիոյ փառաւոր անցեալի մասին: Ի՞նչ կը գտնենք, սակայն, այդ անցեալին մէջ, եթէ գեղարեստի և գիտութեան գործերը բաց հանենք: Վերմանիան, հէնց միջին դարու սկիզբէն, աշխարհաւ կալմներու երկիր մը եղաւ և որ երկիւղալի և ատելի էր բոլոր դրացի ազգերուն: Ահա իր փառաւոր անցեալը: Չեմ ուզեր ատոր համար քարկոծել զինքը, որովհետև մասամբ դարուն քաղաքակրթութեան համապատասխան էր. եթէ Վերմանիան չըլլար աշխարհակալը, ուրիշ ազգ մը եղած պիտի ըլլար: Ստոյգ է սակայն որ Վերմանիան կեղեքիչ նկատուած է, և օտար ժողովուրդներ ատելով կատեն զինքը:

Այս ատելութիւնը աւանդաբար շարունակուած է և դեռ դրացի ժողովուրդներուն մէջ շատ բուն կերպով կը շարունակուի, ինչպէս մեզի ցեղակից գերման Զւիցերիացիներուն մէջ, որոնց ժողովրդական սա բացատրու-



Թիւնը լաւ կը ցոլացնէ այս Հին ատելութիւնը: Զւիցե-  
րիացի մը երբ Գերմանիա երթայ կըսէ. «Ես կերթամ օ-  
տար երկիր մը, Գերմանիա», բայց եթէ Ֆրանսա կեր-  
թայ, կըսէ. «Ես կերթամ մ'եր երկիրը, Ֆրանսա»: Այս  
գանազանութիւնը Հին յարաբերութիւններու պատմա-  
կան հետեանքն է:

Եթէ ուշիուշով ուսումնասիրէք 1848 ի Գերմանա-  
նական Յեղափոխութիւնը, դուք պիտի տեսնէք որ անոր  
ձախողման պատճառը մեծ մասով Գերմանիոյ իր դրսի  
երկիրները ձեռքին տակ պահելու կարիքն էր. այս դը-  
րութիւնը թոյլ չտուաւ գերմանացիներուն անկեղծօրէն  
ազատ դիրք ձեռնել և իբր ճշմարիտ ռամկավար ժողո-  
վուրդ վարել: Իտալական և Ղեհական հարցերը, այս  
պարագային, մասնաւորապէս ջլատիչ ազդեցութիւն ու-  
նեցան. վճռական ընդէին ազատութիւն բառը ամենա-  
ազատական Գերմանացիներու շրթունքներուն վրայ կը  
սառէր: Նոյնը պատահեցաւ 1859 ին, երբ ժողովուրդը  
ոտքի ելաւ իր ազգային անկախութիւնը ձեռք բերելու  
համար: Նոյնիսկ ծայրագոյն-ձախողման կարգերուն  
մէջ կարծիքներու անհամաձայնութիւն կար, թէ ինչ  
դիրք բռնելու էր Գերմանիան այս ազատութեան կռիւն  
մէջ, քանի որ Իտալիոյ մէջ ապահովելիք ստացածքներ  
ունէր: Ահա թէ ինչու Գերմանիա շատ չէ սիրած օտար  
երկիրներու մէջ: Ամէն անգամ որ Գերմանիա կը խընդ-  
րէր ուրիշ ժողովուրդներէն որ սիրեն զինքը, անոնք կէօ-  
թէի «Պրովէթոսին» խօսքերը կը պատասխանէին՝

- Պատիւ ընեմ ես բեզի:
- Ինչո՞ւ համար:
- Գուն երբէք ամոքած ունի՞ս
- Տառապանքները հարստահարածներուն:
- Ունի՞ս երբէք սրբած
- Արցունքները տառապեալներուն:

Եւ սա շատ ճիշտ է Գերմանական ժողովուրդին հա-  
մար. մինչևիսկ մեր օրերը, և Քարլ Մարքս իրուամբ կը  
գրէ. «Մենք, Գերմանացիներս, չենք ընկերացած բնաւ  
ազատութեան, եթէ ոչ անոր թաղման ժամանակ»:

Մեծք ոչ մէկ ժողովրդի ազատարարն եղած չեմք:  
Մէկ անգամ, 1866 ին, Պրիվաթը Վենետիկը արդէն ա-  
զատագրեալ իտալիային տալ տուաւ, բայց Աւստրիան  
տկարացնելու նպատակով էր: Ընդհանրապէս Գերմանիան  
միշտ խոյս տուած է օտար երկիրներու մէջ ազատու-  
թեան շարժումներուն նպաստելէ:

Գերմ. ազատութեան վատ կողմը ան է որ իր աշխար-  
հակալի դիրքը՝ ստիպելով զինքը որ յաղթւողները ձեռքին  
տակ պահէ, երբէք թոյլ չէ տուած Գերման ժողովրդին  
հասկնալ իր բուն ազատութեան արժէքը: Ֆրանսան, Անգ-  
լիան, Ռուսիան ժողովուրդներ ազատագրեցին: Ռուսիան,  
ի պատիւ իր ազատութեան, ժողովուրդներ ունի որ երախ-  
տապարտ են անոր ըսելու. «Քեզի կը պարտինք մեր ա-  
զատութիւնը»: Մենք Գերմանացիներս ի՞նչ կրնանք ցոյց  
տալ միւս ազգերու ըրածներուն դէմ: Ունի՞նք այնպիսի  
քաղաքական գործ մը, որով կարենանք հպարտանալ:

Հայկական հարցին մէջ պատեհ առիթ մը ունինք  
խօսելու ի նպատակ ժողովուրդի մը, որուն դէմ վայրագ  
բնաջնջումի յամր բայց ապահով գործը կը շարունակուի-  
կը յուսամ որ այսօր ձեռնէ ամէն մէկը պիտի զգայ թէ  
օգնութեան կարիք կայ և թէ հարկաւոր է վերջ մը դը-  
նել Թիւրքիոյ անարգ վարչութեան: Այնչ պէտք չէ մեր  
ձայնը խեղդէ:

Խօսքս փոքրիկ ժողովրդի մը մասին է, որ մենէ հեռու  
կը գտնուի և որուն մեծամասը քաղաքակրթութեան մէջ շատ  
առաջացած չէ — զինքը ճնշող լուծին հետեանքով աւե-  
լի նւազ բարձր քաղաքակրթութեան աստիճանի վրայ կը  
գտնուի քան ատենով: Այդ պատճառ մը չէ սակայն մե-  
զի և մանաւանդ այս սրահին մէջ անոնց համար որոնք



Սօցիալ-Տէմօկրատ կուսակցութեան կը պատկանին, որ մեր համակրութիւնը զլանանանք անոր:

Սօցիալ-Տէմօկրատները, կուսի համար իրենց նշանաբան ընտրած են Քրիստոնէութեան հիմնադրին այն խօսքը որ ըսու իր առաքեալներուն. «Իրաւ, իրաւ կրսեմ ձեզի, մինչև որ այս փոքրերէն մէկուն չձառայէք, ինծի ծառայած չէք ըլլար»: Այս հիանալի սկզբունքը դուք կը գտնէք նորագոյն քաղաքակրթութեան այն մեծ և ճշմարտագէտ մարդասիրական շարժման մէջ, որ է Ֆրանսական մեծ Յեղափոխութիւնը: 1793 ի Մարդկային իրաւունքներու յայտարարութեան մէջ հետևեալ յօդուածը կայ, «Ու է հասարակութեան դէմ եղեւն գործել է, երբ անոր անդամներէն մէկուն վրայ բռնութիւն կը բանեցի»: Այս մտքով, մենք կ'ըսենք այսօր, մարդկութեան և ազգերու դէմ ոճիր մըն է հարստահարել և ճնշել քաղաքակրթութեան ընդունակ ազգ մը: Եթէ զոհուած ժողովուրդը մենէ հեռու է, հուժու բողոքներ բարձրացնենք, որ մինչև երկար-Քէօշք լսել և հզօր արձագանքը գտնէ կայսրութեան նախարարապետին մօտ: Պէտք է վերջ մը դնել Թիւրքիոյ անարգ կառավարութեան, ձեռք կարկառել հայերուն և երկրի երեսէն անհետ ընել Սուլթանի հալածանքի սիստէմը: Ասոր համար կը խնդրեմ ձեռնէ որ ամէնքդ բողոքի որոշումի մը հասնութիւնը տար և վաւերացնէք (եղիւր եւ բուռի ծափահար):

Հետևեալ որոշումը, պակաս մէկ ձայնով, միաձայնութիւնով ընդունեցաւ ժողովին կողմէ:

Ժողովը կը յայտարարէ.

«Թրքահայ ժողովրդին առաւելանքները, իր անկասութեան պայքարները և կառավարական գործակալներու

րու կամայականութեան դէմ իր ինքնապաշտպանութիւնը և կիսաքաղաքակիրթ լեռնականներու անգութ բարբարոսութիւնները, կը պահանջեն բոլոր ազատասէր մարդոց համակրութիւնը և մանաւանդ բարոյական աջակցութիւնը քաղաքակիրթ աշխարհի բոլոր գործաւորներուն, որոնք իրենց ազատագրութեան համար կը կուսին:

«Ժողովը իր զգանքը կը յայտնէ այն արիւնահեղ ջարդերուն համար, որոնց այս վերջի տարիներս ասպարէզը եղաւ Հայաստանը և որոնք դեռ կը շարունակուին: Ժողովը այս սոսկալի անգութութիւններուն պատասխանատուութիւնը նախ Սուլթանի կառավարութեան վրայ կը ձգէ, բայց նոյնքան ևս մեծ պետութիւններու կառավարութիւններուն վրայ, որոնք 1878 ի Պերլինի դաշնագրին 61 յօդուածին համաձայն յանձն առին հսկելու կարգ մը միջոցներու հաստատման, որոնք պիտի երաշխաւորէին Հայաստանի մէջ կեանքի որոշեալ գոյութեան մը պայմաններուն ապահովութիւնը:

Ժողովը կը խնդրէ Գերման կառավարութենէն, որ այս ուղղութիւնով Սուլթանի մօտ ազդեցութիւն բանեցնէ, համոզուած ըլլալով որ եթէ այս հարցին մէջ դաշնագիրը ստորագրող տէրութիւնները հաստատ կամք ունենան, Սուլթանի և իր սատարներուն դիմադրութիւնը և քաղաքական ձգձգումները դիւրութեամբ կը խորտակին:


Ժողովը կը փութայ յայտարարել որ՝ հայերուն համար իրաւունքի և ապահովութեան պահանջները բնաւ երբէք ներշնչուած չեն թիւրք ժողովրդի դէմ մանաւոր նախապաշարումներէ: Ժողովը, ընդհակառակը, համոզուած է որ Հայաստանի մէջ արդար զրութեան մը վերահաստատումը համաձայն է թիւրք ժողովրդի շահերուն, որ, ինչպէս հայ ժողովուրդը, միևնոյն բանաւոր պատճառները ունի որպէսզի վերջ մը տրուի պաշտօնեաներու արդի շարաշուք վարչութեան: Այս համոզմունքով, ժո-



ղովը, հայոց ցաւերուն և կոխներուն մասնակցելով  
մէկտեղ, իր խորին համակրութիւնը կը յայտնէ բո-  
լոր ժողովուրդներուն, առանց ազգայնական խտրութեան,  
որոնք, Թիւրքիոյ մէջ, ազատական բարենորոգումներու,  
քաղաքական հաւասարութեան և ընկերային արդարու-  
թեան համար կռիւր կը մղեն:









Հ Ա Յ Յ Ե Ղ . Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն  
Հ Բ Ա Տ Ա Բ Ա Կ ՈՒ Թ Ի Կ Ն Ե Բ Ը

	ճր. ս.
1. Ապսամբական ոգի (սպառ.ած).	.10
2. Յեղախոխական կեանքից (սպառ.)	.05
3. Գազնի սպարան (սպառ.)	.05
4. Գիտական սօցիալիզմ. Ֆ. էնդելՍ (սպառ.)	.40
5. Հայ Յեզ. Դաւանակցութեան ծրագիր. (Գ. սպագր.)	—
6. Կովկասեան խմբի արձանագր. (սպառ.)	.20
7. Կարնոյ յիշատակին (Չորրո հաստած)	.50
8. Հ. Յ. Գ. երրորդ ընդի. ժողովի ասենագրութիւնը	—
9. Կերկիչներ, Homo homini lupus, ՎԱՐԳԳԷՍ (սպառ.)	.20
10. Երիտասարդներին. Պ. ԿՐՍՊՈՏԿԻՆ. (սպառ.)	.20
11. Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Ա. (սպառ.)	.30
12. " " " " Բ. "	.60
13. Կարխային սրամտութիւն. էՂԷՆԻ. (սպառ.)	.50
14. Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Գ.	.30
15. Հայասան եւ Օսկեդանիա.	.50
16. Կովկասեան վերեր. է. ԱՅՆՈՒՆԻ.	3.00
17. Հայրենիքի գաղափար. Մ. ՎԱՐՆԱԿԵԱՆ (սպառ.)	1.00
18. Կազմակերպական կանոններ. (Բ. սպագր.)	—
19. Դեպի կախ. է. ԱՅՆՈՒՆԻ. (Կովկաս՝ 1 բուլքի, Ասերիկա՝ 1/2 դղար)	2.00
20. Յեղախոխականներ. Ս. ՆՐԻՎԱՆԵԱՆ (սպառ.)	.20
21. Նախագիծ Կովկասեան գործուկութեան. (Բ. սպ.)	—
22. Подвиги царизма. В. Арапатскій.	.50
23. Les tueries de Bakou A. ARAZI	.20
24. Յեղախոխական դաւն.	.20
25. Հ. Յ. Գ. երրորդ ընդի. ժողովի ասենագրութիւնը.	—
26. Կոչ Մանվեսկաններին (բուրքերէն)	.10
27. Les Plais du Caucase E. AKNOUNI	2.00
28. Ազատութեան հանապարհին. ՂԱՐԻԲ. Գ. ԳՐԻՂԻ.	.40
29. Մեծ մարդապանի դէմ (Դասալարութիւն)	.50
30. Վիսօսի բազէն. ՎՏԱՐԱՆԳԻ.	.50
31. Յեղախոխականի մեկեր. Գ. ՄԻՔԱՅԵՂԵԱՆԻ (Մամ. տակ)	—
32. Հայորդիներ. ՍԻԱՄԱՆԹՈ.	.50
33. ՄասունՄուսի կախիներ	.50
34. Հայկական սանջանգները եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՅՆ	.50
35. Մարտական երանանգներ. ԱՆԻԲԱՆԻԿ (Մամլոյ տակ)	1.00

Դիմել՝ «Դրօշակի» խմբագրութեան, թրոնի վ.:



« Ազգային գրադարան



№ 0413497



65

9147-925)

P-56